

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

#### I

«Արարատի»-ի ներկայ թուականի յունուարի տետրակում հ. Մետրոպ վարդապետը պրոֆ. Մառին ուղղած «Ակամայ պատասխան» յօդուածի մէջ իրաւունք է համարել իրեն յատուկ բարեկիրթ ձևերով մեր հասցէին ուղղել անտեղի հեղնութիւններ և վիրաւորանքներ, որին առիթ չենք տուել: Ահա այդ խօսքերը.

«Եջմիածնի ղիպումաւոր վարդապետներից մէկը. Տրաֆարետին վարդ. Յովսէփեան», այդ յօդուածը թարգմանել և տպել է «Ֆիւզանդիոն» թերութում, հանգիստ խղճով ընդունելով վիրաւորանքը, երևի քրիստոնէական խոնարհամտութեամբ. նա նոյն հանդատութեամբ մարտել է յատկապէս առուածարանական գիտութեան ներկայացուցիչներին ուղղած կծու ակնարկը:

Գուք տեսէք, թէ որքան թոյն կայ այդ խօսքերի մէջ, որ հեղինակի սրտի լաւագոյն յայտարարն է: Մոլորուած իւր սխալ հաշիւներով և կուրացած անգուսպ կօքից, նեղութիւն չէ կրել մտածելու. թէ ինչո՞ւ համար են այդ ծանր խօսքերը և ի՞նչ առիթիւ: Բայց մենք իւր ծաղրած «քրիստոնէական խոնարհամբրութեամբ» կպարզենք խնդիրը, եթէ ինքը չհաստականայ իւր վարմունքի անվայելչութիւնն ու անտեղութիւնը, գոնէ ընթերթերցողները չմոլորուին:

Անց տարուց ի վեր պ. Թորոմանեանն անձնուէր կերպով աշխատում է հայ արուեստի և ճարտարապետութեան ուսումնասիրութեամբ, որի արդիւնքը վերջերս արժանացաւ մեծ գնահատութեան Պետերբուրգի Գիտութեանց ձեմարանի կողմից: Մենք յարգանքով լցուած դէպի համեռա, բայց առկուն աշխատաւորի գործը, ծանօթացրինք հայ հասարակութեան նորա կատարած աշխատութեան և ձեմարանի տուած վկայականի հետ: ձեմարանի տուած վկայականի մէջ կարծիքներ կային ոչ միայն պ. Թորոմանեանի աշխատութեան, այլ և հայ գեղարուեստի նշանակութեան մասին և այն էլ այնպիսի հեղինակաւոր գիտնականների կողմից, որպիսին Անդակովն է, Սուլտանովը, Պրեօարբաթենսկին, Մազը: Այստեղ ուրեմն ինձ համար նշանակաւթիւն է ունեցել վերոյիշեալի հետ մասամբ ևս բանասիրական տեսակէտը: Ահա այդ յօդուածի ապագրութեան շարժառիթները, որ կարծեմ, յանցաւոր ոչինչ չունի:

Պրօֆ. Մառի գրութեան մէջ որ Թորքմանեանի կենսագրականն է, արդարեւ, ակնարկ հայ էջմիածնի միաբաններից ոմանց մասին: Մենք բառացի մէջ կրեքենք այդ հատուածը, որպէս զի ընթերցողն ինքը դատէ, թէ Ահազեմիայի այդ վկայականի թարգմանութեամբ արդեօք «հանդիստ խղճով վերաւորանքը ընդունողն» վիճակումն ենք եղել, ինչպէս հաճել է հասկանալ և հռչակել հ. Մեսրոպը, թէ իւր երեւակայողութեան արդիւնքն է:

«Էջմիածնում շատ կատկածանքով էին նայում պ. Թորքմանեանի վերայ, որ երեացել էր աշխատանքից մաշուած շուրերով, ուժառայաւ, կիսահիւանդ, այն էլ մի տաճկահայտակա, որ իրեն ճարտարապետ էր անուանում, չունենալով ուսաց գեղարուեստից ձեմարանի կամ սէ է բարձր տեխնիքական հաստատութեան վկայական: Մէկը լուսաւորեալ վանականներից, որոնց թւում կան համալսարանական վկայականով անձինք, ուրիշ կերպ չէր կամենում անուանել նրան իրենց աչքում այդ ինքնակոչ ճարտարապետին, բայց եթէ «վարպետ», այսինքն «ուսուս»: 1

Այս ամբողջ հատուածիս պարզ է, որ պրօֆ. Մառը էջմիածինն ընդհանրապէս վարկաբեկ անելու ոչ մի գիտաւորութիւն չէ ունեցել. նրա խօսքերն ուղղուած են սրօշ անձանց դէմ, որոնք գործ ունենալով պ. Թորքմանեանի հետ, այնքան կոշտ ու անառչ են եղել, որ նրան «վարպետ» են անուանել, չինայելով նրա անձնատիրութիւնը: Գուցէ այդ մեզադրանքը մի թիւրիմացութեան արդիւնք է Մառի կողմից, որ հաւանական չէ, հաստատ է միայն, որ այդ խօսքերը ուղղուած չեն էջմիածնի ամբողջ միաբանութեան կամ ըստ «լուսաւորեալ վանականների» դէմ, այլ մէկի կամ երկուսի: Ուրեմն և ես, մէկը այդ «լուսաւորեալ վանականներից», որ համարձակուել եմ առանց հ. Մեսրոպից թոյլ աւութիւն խնդրելու թարգմանել այդ յօդուածը, անձնական վերաւորանքի ոչ մի պատճառ չունէի:

Երկրորդ հատուածը, որի մէջ կժու ակնարկ է նկատում

1 Բնագրի մէջ գուցէ եւ «ոմանք լուսաւորեալ վանականներից» լինի. որովհետեւ սեւազրուծեան մէջ բայը յոյսալի էր: Ընդհա ըստ այդ թարգմանութիւնը կատարուած է շատ շտապ՝ Անիում եւ մինք հնարաւորութիւն չենք ունեցել կրկին համեմատելու բնագրի հետ: Բայց «ոմանք» լինի թէ «մէկը» յարուցած խնդրի համար նշանակութիւն չունի. հ. Մեսրոպը պ. Մառի գրութեան հետ ծանօթ է միայն մեր թարգմանութեամբ. աւելի ճիշտ՝ փոխադրութեամբ:

հ. Մեսրոպը աստուածաբանական գիտութեան ներկայացուցիչները զէմ, որ մենք «մարտէլ ենք» խղճի «նայն հանգստութեամբ», հետևեալն է. «Սկզբում նրան (Թորամանեանին) կարողութեան չափ օժանդակեց տեղի (Անիի) հ. Միքայէլ վարդապետը, որ անփորձ գիտական և աստուածբանական աստիճանները, պահել էր քրիստոնէական բարոյականութեան սրտառուչ հաւատարմութիւն»:

Այստեղ ի հարկէ տիեզերքի աստուածաբանները զէմ մի բան կայ ասուած, բայց մի՞թէ յերաւի այնպիսի բնաւորութիւն ունի այդ խօսքը, որ մենք անձնական վերաւորանք զգայինք և չթարգմանէինք հայ արուեստի և նրա աշխատանքի համար այոքան գովեստով լի հեղինակաւոր մի վիպութիւն, մանաւանդ, երբ հաստատ գիտենք, որ պրոֆ. Մաւր բացի բարեկամական զգացմունքից, ոչինչ չունի մեր դէմ: Որպես՛ նուրբ պահանջներ ուրիշներից պատուասիրութեա, մասին, երբ ինքը երկաթի ձեռնոցներով է մօտենում նոյն խնդրին:

Այս բոլորից պարզ է, որ հ. Մեսրոպը «զուր տեղը մեծ ազմուկ» է յարուցել և նրա վարմունքը, ամենամեղմ կերպով որակելով՝ անվայել է: Մենք չունինք հ. Մեսրոպի այն սրատեսութիւնն ու նրբազգածութիւնը, որ չեղած բաները տեսնենք և զգանք: Անպատշաճ է հ. Մեսրոպի կողմից նաև «քրիստոնէական խոնարհամտութիւն» բառերով ծաղրել մի վարդապետի. քրիստոնէական խոնարհամտութիւնը մի բարձր առաքինութիւն է, որին ձգտելը պատիւ կհամարէի ինձ համար, և կցանկայի, որ փոքր ինչ էլ հ. Մեսրոպի մէջ լինէր. այն ժամանակ շատ անտեղի և ի դուր անախորժութիւններից ազատ կլինէինք: 1)

**Գարեգին վարդապետ**

II

**ԶԱՐԲԱՆԱԼԻ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ**

Քննադատութեան օրինակելի և օգտակար գործը մեծաւ մասամբ մեղանում արդէն դարձել է մի սովորական «չուտ ասելիք» և ով իրեն ընդունակ է գտել

1) Տպագրելով հայր Գարեգին վարդապետի ներկայ նամակը անփոփոխ, ո՞նի ևս դարձուածների վայելչութեան պատասխանատուութիւնը թողնում ենք նամակագրի վրա: